բամբկա՛ ձորու իշխեսցես 'ի վերայ ամենայն հրացի զինաց, որ վերայբերէ տանն հայոց, տուաք իշխանութիւն ձեզ որոնել և ջանալ թեթևացուցանելոյ ծանրութիւնն զինաց և հետևել ուղղակի ընթացուցանելոյ ամենայն զէն հրացու առ 'ի գործ, և համնմատիլ ամենայն ծանրութեան թօփս ընդ կլօլն և սմբայն իւր, և զգոյշացուցանել կառապետ իշխանին 'ի յօրինելն կառոց զգոյշանասցէ զի գտցի թեթևագնացս և հաստատուն, և տուաք իշխանութիւն քեզ զգոյշանալ և որոնել 'ի մէջ ամենայն քաղաքաց ամրոցաց եթէ գտցի պակասութիւն ինչ 'ի հրացի զինուց որպէս Օրէնէ հայոց որքայնութեամբ լինելոյ, յորդորեսցես զինապետին որ լցուցանէ պակասութիւնն և մեզ ազդ արասցես, տուաք իշխանութիւն քեզ զի ջանասցես գտանել արհեստաւորս հալելոյ երկաթի 'ի աշխարհն հայոց և յօրինել թօփ և կլօլ երկաթէ ծախիւք տանն հայոց, պատուիրեմք քեզ զի ջանասցես և պատուիրեսցես ամենայն թֆանգ, և փստօլ շինօղաց, որ 'ի յերեսս ամենայն երկրին մերոց ամենայն այսպիսի գործի արհեստաւորք 'ի յօրինելն թֆանգ և փստօլն համայն միակերպ երկայնութիւն. թէ կլօլի մեծութիւն, թէ սմբէն, թէ չախմախն և այլն, որ բեկանելով մի անգամ զինուց միւսոյն կարէ մուծանել տեղի նորա, տուաք հրաման քեզ կարգադրել կանօն 'ի մէջ ամենայն հրաց զինուո-